
ԽՄԲԱՅԻՆ ՀԱՅՑԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳԵՂԱՄՅԱՆ ԷԼԻՆԱ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական
իրավունքի ամբիոնի դասախոս,
«ԹԱՌԻԵՐ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՔՈՆՍԱԼԹԱՆՏՍ» ՓԲԸ
իրավաբանական ծառայության ղեկավար
DOI: 10.63925/18294847-2026.bl21-04

Ամփոփագիր. Հոդվածում քննարկվում են վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի պաշտպանության որոշ հիմնահարցեր՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն մեխանիզմներին, որոնք հնարավորություն են տալիս, մի կողմից, արդյունավետ վերահսկել և հասցեավորել վարչարարության ոչ իրավաչափության կրկնվող և լայնամասշտաբ դրսևորումները, մյուս կողմից՝ ապահովել իրավաբանորեն արժևորվող հանրային շահի վրա ազդեցություն ունեցող վարչարարության բողոքարկման հնարավորությունը նույնիսկ այն դեպքերում, երբ բացակայում է վարչարարության բողոքարկմամբ իրական շահագրգռվածություն ունեցող հասցեատերը կամ այլ սուբյեկտը: Հոդվածում ուսումնասիրվում է խմբային հայցի ինստիտուտը՝ եվրոպական, հյուսիսամերիկյան և ռուսական դոկտրինալ աղբյուրների և համեմատական դատական պրակտիկայի հետազոտմամբ: Հեղինակը եզրահանգում է, որ խմբային հայցը ոչ միայն դատավարական խնայողության միջոց է, այլև վարչարարության ոչ իրավաչափության համակարգային դրսևորումների դեմ պայքարի արդյունավետ գործիք, որը, սակայն, չի կարող մեկնաբանվել որպես վարչարարության բողոքարկման սուբյեկտներին առաջադրվող պահանջների մեղմացում, վարչարարության բողոքարկման սահմանների լայնացում կամ գործադիր իշխանության գործառության ինքնուրույնությունը պահանջող ոլորտներում դատական միջամտության թույլատրելիություն:

Հոդվածում քննարկվում է հասարակական կազմակերպությունների կողմից հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման ինստիտուտը, որի և մի կողմից՝ սոցիալապես խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության, մյուս կողմից՝ *actio popularis* հայցատեսակի համադրված

վերլուծության արդյունքում հեղինակն առանձնացնում է այս ինստիտուտների սկզբունքային տարբերությունները՝ միաժամանակ առաջադրելով հասարակական միավորումների կողմից հանրային շահի պաշտպանության համատեքստում վարչարարության բողոքարկման նոր՝ վարչարարարության բնույթին և բողոքարկող սուբյեկտին առաջադրվող չափանիշները:

Բանալի բառեր. խմբային հայց, հանրային շահ, վարչարարություն, բողոքարկում, հասարակական միավորումներ, *actio popularis*:

Վարչարարության բողոքարկման համակարգում հանրային շահի պաշտպանությունը չպետք է խիստ սահմանափակ մեկնաբանություն ստանա և կապվի միայն հանրային շահի պաշտպանության նպատակով որոշակի սուբյեկտներին վարչական դատարան դիմելու իրավունք վերապահելու կամ, առավել ևս, միայն սոցիալապես խոցելի առանձին խմբերի իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի հետ: Վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի պաշտպանությունը պետք է իրականացվի վարչական վարույթի և դատավարության բոլոր փուլերում՝ մի շարք գործիքակազմերի համատեղ կիրառման միջոցով, որոնց շրջանակում, ի թիվս այլնի, առանձնահատուկ նշանակություն ունեն վարչական դատավարությունում խմբային հայցի և հասարակական կազմակերպությունների՝ հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելու ինստիտուտները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խմբային հայցը և հանրային շահերի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկումը վարչական իրավունքում զարգացել են միևնույն հենասյունի վրա՝ նպատակ ունենալով վարչարարության բողոքարկումն ապահովել այնպիսի հարաբերություններում, որոնցում վարչարարությունը, իր ունեցած ազդեցության բնույթից ելնելով, դուրս է ավանդական՝ վարչական մարմին-վարչարարության հասցեատեր հարաբերությունների համակարգից: Այս երկու ինստիտուտները, առերևույթ միտված լինելով նաև առաջնահերթ վարույթային խնայողության ապահովմանը, առաջնահերթ նպատակ են հետապնդում ուղղել վարչարարության համակարգում ոչ իրավաչափ գործելաոճի առավել լուրջ ու համակարգային դրսևորումները: Պատահական չէ, որ այս ինստիտուտները, թեև որոշակիորեն տարբերվող դրսևորումներով ու

բովանդակությամբ, բայց այժմ լայնորեն ճանաչվում են թե՛ եվրոպական, թե՛ հյուսիսամերիկյան և թե՛ ռուսական դոկտրինալ աղբյուրներում¹:

Խմբային հայցի ինստիտուտի նպատակը նույնանման փաստական և իրավական հանգամանքներ ունեցող հայցերի միավորումն ու քննությունն է մեկ գործում՝ այդպիսով հնարավորություն ընձեռելով ապահովել դատաքննության խնայողություն, միատեսակ փաստական և իրավական հանգամանքների առնչությամբ դրսևորել միատեսակ մոտեցում և նույն փաստական և իրավական դրությունն ունեցող անձանց համար ապահովել իրենց իրավունքների համատեղ պաշտպանության հնարավորությունը: Խմբային հայցի ներկայացումը նաև ազդակ ու ցուցիչ է առ այն, որ դրա հիմքում ընկած վարչարարության ոչ իրավաչափ իրականացումը կա՛մ համակարգային բնույթ է կրում, կա՛մ առնվազն վարչական մարմինը բազմաթիվ դեպքերում նույն հիմքերով ենթադրյալ ոչ իրավաչափ վարչարարություն է իրականացրել: Այս համատեքստում հանրային շահի պաշտպանության ապահովման համար կարևոր է այն հարցի պատասխանը, թե հնարավո՞ր է արդյոք նույնանման իրավիճակում գտնվող այլ անձանց անունից դատարան դիմելը կամ առանձին անհատների կողմից միևնույն հայցի շրջանակում իրենց իրավունքների նույնաբնույթ խախտման բարձրաձայնման հնարավորություն ունենալը: Ասվածը կարևորվում է նաև նրանով, որ օրենսդրական կարգավորումները, որոնք յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պահանջում են առանձին գործի հարուցում, ոչ միայն վատնում են սոցիալական ներուժը, այլև թուլացնում են հայցի հիմքերը², քանի որ միայն մեկ գործով ոչ իրավաչափ վարչարարությունը և կոնկրետ հիմքով դրա համակարգային դրսևորումը միմյանցից էականորեն տարբերվող նշանակություն ու ազդեցություն ունեն: Հենց այս հանգամանքով պայմանավորված՝ մի շարք երկրներում, հատկապես Լատինական Ամերիկայի երկրներում, սոցիալական արդարության ապահովման նպատակով ներդրվել և զարգանում է խմբային հայցի ինստիտուտը:

Խմբային հայցը կարելի է բնորոշել որպես իրավաբանական գործիք, որը երաշխավորում է երկու կամ ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ նրանց բոլորի անունից հանդես գալու իրավասություն ունեցող կազմակերպության կողմից պատասխանողի ոչ իրավաչափ վարքագիծը դադարեցնելու կամ իրավունքների

¹ St' u Sunstein C., *Why Groups Matter in Administrative Law* // Journal of Legal Studies, Vol.39, էջ 431

² St' u Scott, C. and Macklem P., *Constitutional Ropes of Sand or Justiciable Guarantees - Social Rights in a New South African Constitution* // University of Pennsylvania Law Review, Vol. 141(1), 1992, 1-148, էջ 141

մասսայական խախտման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցում ստանալու նպատակով նախաձեռնվող դատական գործընթաց³:

Խմբային հայցերը դատավարության մեկ կամ մի քանի տեսակներում ճանաչելու ամրագրել են, օրինակ, Բելգիան, Բուլղարիան, Դանիան, Անգլիան, Ֆրանսիան, Ֆինլանդիան, Նորվեգիան, Պորտուգալիան, Շվեդիան, Լեհաստանը, Լիտվան, Իտալիան, ԱՄՆ-ն, Կանադան և այլ երկրներ: Պատահական չէ, որ մի շարք աղբյուրներում խմբային հայցի ինստիտուտը բնորոշվում է որպես «իրավաբանական տրանսպլանտ»⁴. Նշված հասկացությունը կիրառվում է իրավաբանական այնպիսի ինստիտուտներ, կանոններ կամ պրակտիկաներ բնորոշելու համար, որոնք, մի երկրում ծագելով, արագ տարածվում են այլ երկրներում⁵:

Չնայած այն հանգամանքին, որ խմբային հայցերը, ծագելով ԱՄՆ-ում, արագ տարածվել են ողջ աշխարհով, և ներկայումս Եվրոպական երկրների մեծամասնությունը ևս տարբեր դատավարություններում ճանաչում է խմբային հայցի ինստիտուտը, խմբային հայցի՝ այսպիսի լայն տարածումը միասնական պատճառ և հիմնավորում չունի: Այնուամենայնիվ, խմբային հայցերի ներկայացման հիմքում ընկած ամենակարևոր պատճառներից մեկն իրավունքների մասսայական խախտումների աճն է և այդպիսի խախտումների դեպքում դատարաններում միատեսակ մեծաքանակ հայցերի ներկայացումը կանխելը⁶:

Եվրոպական Միության իրավունքում վարչական իրավունքի համակարգում իրավունքի պաշտպանության խմբային միջոցները կիրառվում են հատկապես սպառողների իրավունքների պաշտպանության և խտրականության դեմ պայքարի ոլորտներում, քանի որ այս ոլորտներում իրականացվող վարչարարությունն օբյեկտիվորեն այնպիսին է, որ ազդում է հանրության լայն շրջանակի վրա⁷: Չնայած այն հանգամանքին, որ Եվրոպական միության Հիմնարար իրավունքների մասին

³ Տե՛ս Commission Recommendation of June 11, 2013, on common principles for injunctive and compensatory collective redress mechanisms in the member states concerning violations of rights granted under Union Law (2013/396/EU), հասանելի է՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32013H0396>, 08.02.2026թ. դրությամբ

⁴ Տե՛ս Watson A., *Legal Transplants: An Approach to Comparative Law*, University Press of Virginia, 1974

⁵ Տե՛ս Graziadei M., *Comparative Law as the Study of Legal Transplants*, in Mathias Reimann & Reinhard Zimmermann (eds.), *The Oxford Handbook of Comparative Law*, Oxford University Press, 2006

⁶ Տե՛ս Hensler, D. R. *The Global Landscape of Collective Litigation. Class Actions in Context*, 3–20. <https://doi.org/10.4337/9781783470440.00008>, էջ 2, հասանելի է՝ <https://u.to/5aF0lg>, 08.02.2026թ. դրությամբ

⁷ Տե՛ս European Commission, *Collective Redress in the EU (COM(2013) 401 final)*

հոչակագրում իրավունքի պաշտպանության խմբային միջոցներն ուղղակի ամրագրում չունեն, ԵՄ Արդարադատության դատարանը շարունակաբար հաստատել է այն դիրքորոշումը, որ նշված հոչակագրի 47-րդ հոդվածի համատեքստում արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է նաև վարչարարության բողոքարկման՝ վարչարարության համակարգային վերանայումը երաշխավորող գործիքակազմերի առկայություն: Եվրոպական գիտական աղբյուրներում շարունակաբար ընդգծվում է «հանրային» օրինականության երաշխավորման աճող անհրաժեշտությունը՝ հատկապես շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում⁸: Իտալական ու ֆրանսիական աղբյուրներում ընդգծվում է, որ իրավունքի պաշտպանության խմբային միջոցները, այդ թվում՝ խմբային հայցը, կոչված են լրացնելու բողոքարկման այլ՝ թույլ կամ քաղաքական նկատառումներից ելնելով ոչ արդյունավետ համակարգին՝ հատկապես վարչարարության ձգձգումների և վարչական մարմինների անգործության լայն դրսևորումների դեպքում⁹:

Ռուսական գրականությունում ևս աստիճանաբար ընդգծվում է խմբային վարչական հայցերի ինստիտուտի ներդրման հնարավորությունը: Ստարիլովը և Կովալյովան նշում են, որ խմբային հայցի ինստիտուտի ներդրումն անհրաժեշտ է այնպիսի ոլորտներում, որտեղ իրավունքի պաշտպանության անհատական միջոցները չեն կարող արդյունավետ լինել բյուրոկրատական հայեցողության դեմ պայքարի համար, մասնավորապես՝ շրջակա միջավայրի պաշտպանության, սոցիալական բարեկեցության, հանրային ծառայության, հողօգտագործման ոլորտները¹⁰:

Այսպիսով՝ խմբային հայցի ինստիտուտը պարզապես մի քանի անձի հայցերը մեկ հայցում միավորելուն ուղղված գործիք չէ. խմբային հայցի ինստիտուտը վերաիմաստավորում է վարչարարության իրավաչափության դատական վերահսկողությունը՝ հնարավորություն տալով վարչարարության կոնկրետ հասցեատեր-վարչական մարմին հարաբերությունների շրջանակից զատ հասցեագրել վարչարարության ոչ իրավաչափության առավել լայնամասշտաբ դրսևորումները: Խմբային հայցը դատարանին հնարավորություն է տալիս հասցեագրել ոչ միայն առանձին գործով ոչ իրավաչափ վարչարարությունը, այլև վարչական մարմինների

⁸ St'u Case C-583/11 P Inuit Tapirrit Kanatami v Parliament and Council EU:C:2013:625

⁹ St'u Sabino Cassese, Il diritto amministrativo europeo (Giuffrè 2014) 312–320

¹⁰ St'u, օրինակ, Ю Н Старилов, *Административная юстиция* (Воронежский гос. университет 1999) 245–260, Е А Ковалёва, Публичные иски в административном судопроизводстве (2020) 3 Вопросы правосудия.

այնպիսի ոչ իրավաչափ գործունեությունը, որը վերածվել է վարքագծային մոդելի: Խմբային հայցի ինստիտուտի այս մեկնաբանությունը, ծագած լինելով ԱՄՆ-ում, այժմ, ըստ էության, կիրառվում է նաև Ֆրանսիայում ու Գերմանիայում՝ «համակարգային ոչ իրավաչափության» դեմ պայքարի համատեքստում:

Հայաստանի դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ բազմաթիվ են դեպքերը, երբ վարչական մարմնի՝ նմանատիպ փաստական հանգամանքների վերաբերյալ կայացված վարչական ակտերի հիմքում նաև նույն իրավական հիմքերն են, և այդ վարչական ակտերը վիճարկվում, անվավեր են ճանաչվում նույնական իրավական հիմքերով: ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի ամրագրում խմբային հայցի ինստիտուտը՝ այդպիսով հնարավորություն չտալով վարչարարության ոչ իրավաչափության համակարգային դեպքերում խախտված իրավունքների պաշտպանությունն իրականացնել մեկ վարույթի շրջանակում:

Մինչդեռ, խմբային հայցի ներդրումը վարչական դատավարությունում հնարավորություն կտա ոչ միայն մեկ վարույթում միավորել և քննել տասնյակ, եթե ոչ հարյուրավոր առանձին վարչական ակտերի իրավաչափության հարցը, այլև էականորեն կնպաստի նույնաբնույթ վարչական ակտերի հասցեատիրոջ կողմից իրենց իրավունքների պաշտպանությանը ձեռնամուխ լինելուն: Այսպես, Եվրոպական հանձնաժողովը Եվրոպական միության անդամ երկրներին ուղղված՝ իրավունքների խմբային պաշտպանության միջոցներ նախատեսելու վերաբերյալ հանձնարարականի շրջանակում ընդգծել է, որ իրավունքների խմբային պաշտպանությանը միտված միջոցները՝ միատեսակ հայցերը միավորելը կամ այդպիսի հայցերը խմբային կերպով ներկայացնելը, էականորեն նպաստում են նաև արդարադատության մատչելիության ապահովմանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհատական գործով դատարան դիմելու ծախսերն ու պահանջվող ջանքերն էականորեն ավելի շատ են, քան խմբային հայցի համար պահանջվողները¹¹:

Վարչարարություն իրականացնելիս անձանց իրավունքների և օրինական շահերի համակարգային բնույթ կրող խախտումները ոչ միայն հանգեցնում են անձանց՝ իրենց իրավունքների պաշտպանվածության առնչությամբ վստահության խնդիրների, այլև

¹¹ St'u Commission Recommendation of June 11, 2013, on common principles for injunctive and compensatory collective redress mechanisms in the member states concerning violations of rights granted under Union Law (2013/396/EU), հասանելի է՝ <https://u.to/56F0lg>, 08.02.2026թ. դրությամբ

ուղղակի ազդեցություն են ունենում սեփական իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու շարժառիթի վրա: Դատական գործերի երկար տևողությունը, դատավարական բարդ ընթացակարգերը հաճախ հանգեցնում են նրան, որ իրավական հատուկ գիտելիքներ չունեցող քաղաքացին, վստահ լինելով, որ վարչարարության հետևանքով իր իրավունքները խախտվել են, այնուամենայնիվ, նախընտրում է չդիմել դատարան: Մինչդեռ, ակնհայտ է, որ նման իրավիճակում իրավական արժևորման ենթակա առանձին հանրային շահեր են նաև դատարանի նկատմամբ վստահությունն ու ընդհանուր հասարակության համար իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցի ապահովումը: Խմբային հայցի ինստիտուտն այս համատեքստում ուղղակի հնարավորություն է՝ զգալի քանակ կրող նույնանման փաստական ու իրավական հիմքերով հայցերի միավորման և, օրինակ, խմբային հայցի բավարարման արդյունքում մեկ գործի շրջանակում ունենալ վարչական մարմնի՝ տվյալ ոլորտում իրականացվող քաղաքականության վրա էական ազդեցություն: Ուստի ակնհայտ է, որ խմբային հայցը թե՛ գիտական և թե՛ գործնական մակարդակում կարող է վերածվել գործադիր իշխանության՝ հանրության շահին ոչ համապատասխան քաղաքականության դեմ պայքարի արդյունավետ գործիքակազմի¹²:

Հանրային շահի պաշտպանության համատեքստում խմբային հայցի ինստիտուտի մյուս կարևոր հատկանիշն այն է, որ խմբային հայցի դեպքում որպես դատարան դիմող սուբյեկտ հանդես են գալիս վարչարարությունից տուժող, այսինքն՝ մասնավոր շահի պաշտպանությամբ վարչարարության բողոքարկման սուբյեկտ համարվող անձինք: Այս տարանջատումը շատ կարևոր է խմբային հայցի ներդրման դեպքում այն համարժեք իրավական գործիքակազմով ապահովելու տեսանկյունից: Խմբային հայցի ներկայացումը չի կարող մեկնաբանվել պարզապես որպես հասարակության մի խումբ անդամների՝ իրենց հուզող հարցերի բարձրաձայնման հնարավորություն. խմբային հայցը պարզապես գործիքակազմ է՝ վարչական դատավարության կարգով քննության ենթակա և համապատասխան պահանջներին բավարարող հայցատեսակները մեկ վարույթում միավորելու, ուստի խմբային հայցի դեպքում պարտադիր է, որ դրա շրջանակում որպես հայցվոր հանդես եկող

¹² Ընդ որում՝ հատկանշական է, որ, ի տարբերություն վարչական դատավարության, որտեղ ներպետական օրենսդրությունը դեռևս չի ամրագրել խմբային հայցի ինստիտուտը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում ամրագրվել է խմբային հայցի ինստիտուտը:

յուրաքանչյուր անձ բավարարի դատարան դիմելու իրավունքի համար առաջադրվող պահանջներին, այլ կերպ ասած՝ հանդես գա որպես իրավական շահագրգռվածություն ունեցող անձ:

Ի տարբերություն խմբային հայցի, որը մինչ հանրային շահի պաշտպանությանը միտված լինելը նախ խմբային հայցով հայցվորներից յուրաքանչյուրի իրավունքների պաշտպանության ապահովմանն ուղղված գործիք է, այլ է իրավիճակը առանձին սուբյեկտների կողմից հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելու այն դեպքերում, երբ վերջիններս չունեն վիճարկվող վարչարարության առնչությամբ անհատական իրավական շահագրգռվածություն: Առանձին անհատի՝ հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելու հնարավորությունը, առանց իրական շահագրգռվածության առկայության, ներկայումս գրեթե չի հանդիպում ուսումնասիրված երկրների իրավական համակարգերում: Նման հնարավորությունը, ըստ էության, կհանգեցնե՛ր *actio popularis* հայցատեսակի ամրագրման, ինչը, սակայն, վարչական դատավարության ժամանակակից համակարգերում իրավունքների պաշտպանության խրախուսելի գործիքակազմ չի համարվում՝ ընդհուպ մեկնաբանվելով որպես իրավական որոշակիության, իրավական կայունության տեսանկյունից խիստ խնդրահարույց: Այս համատեքստում առանձին անհատի կողմից հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելն անհատական իրական շահագրգռվածության բացակայության դեպքում համարում ենք անընդունելի:

Ուստի քննարկման ենթակա է այն հարցը, թե արդյո՞ք վարչարարությունը կարող է բողոքարկվել «տուժողի» սուբյեկտիվ իրավական շահագրգռվածությունից զատ որևէ այլ հիմքով, և եթե՝ այո, ապա ի՞նչ շրջանակի սուբյեկտների և ո՞ր դեպքերում պետք է վերապահվի հանրային շահի պաշտպանությամբ վարչարարության բողոքարկման իրավունքը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման իրավունքը ճանաչող երկրներում այդպիսի իրավունքը սովորաբար վերապահվում է միայն առանձին հասարակական միավորումներին: Այս համատեքստում տարբեր մոդելներ կան, և հասարակական միավորումների՝ դատարան դիմելու վերաբերյալ մոտեցումները

տարբերվում են՝ այն *actio popularis*¹³ համարելուց և դրա կիրառման հնարավորությունն ամբողջությամբ ժխտելուց մինչև Հնդկաստանի փորձի համատեքստում հասարակական կազմակերպություններին դատարան դիմելու լայն հնարավորություն ընձեռելը: Այնուամենայնիվ, որոշ աղբյուրներում ընդգծվում է, որ նույնիսկ հասարակական կազմակերպություններին դատարան դիմելու այսպիսի լայն հնարավորություն ընձեռող իրավական համակարգերում ներկայումս արդեն նկատվում է հակառակ միտումը՝ ապագայում հասարակական միավորումների՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակումը միայն այն դեպքերով, երբ հանրային շահի պաշտպանության իրացումն այլ գործիքակազմով անհնարին է՝ հաշվի առնելով այն, որ առկա չէ անհատի մակարդակում վարչարարության բողոքարկման իրավունք ունեցող որևէ սուբյեկտ¹⁴:

Կարծում ենք, որ *հասարակական միավորման՝ իր անդամների որոշակի շրջանակի իրավունքների, այլ կերպ ասած՝ այլոց իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքը և հանրային շահի պաշտպանությամբ հասարակական միավորման կողմից վարչական դատարան դիմելը միմյանցից հիմնովին փարբերվող ինստիտուտներ են*: Հասարակական կազմակերպության՝ իր անդամների իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու հիմքում հանրության՝ սույն աշխատանքի շրջանակում որպես վարչարարության բողոքարկման հիմք դիտարկվող շահ կարող է առհասարակ առկա չլինել, և բողոքարկման արդյունքում կայացվող որոշումն ազդեցություն կունենա միայն վարչարարության կոնկրետ, անհատականացված հասցեատերերի վրա: Մինչդեռ՝ հանրության շահի պաշտպանությամբ բողոքարկման դեպքում, անկախ վարչարարության կոնկրետ հասցեատերերի առկայությունից, վարչարարությունն ինքնին, հետևաբար նաև՝ դրա բողոքարկումը, պետք է ուղղակիորեն ազդի հանրության կոնկրետ շահի վրա:

Վերոգրյալի ակնհայտ դրսևորումն է «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և

¹³ Հռոմեական իրավունքից ծագող այս հայցի էությունը, ըստ էության, հասարակության ցանկացած անդամի կողմից իրեն հուզող հարցով դատարան դիմելն է՝ անկախ տվյալ սուբյեկտի իրավունքները փաստացի խախտված լինելուց:

¹⁴ Տե՛ս, Mangold A. K., Rainer W. (2015). Das europäisierte deutsche Rechtsschutzkonzept. Die Verwaltung. 48. 1-28. 10.3790/verw.48.1.1, էջ 18, հասանելի է՝ https://www.researchgate.net/publication/277620698_Das_europaisierte_deutsche_Rechtsschutzkonzept, 08.02.2026թ. դրությամբ

արդարադատության մատչելիության մասին» (Օրիուսի) կոնվենցիայի հիման վրա հասարակական միավորումներին տրվող՝ դատարան դիմելու իրավունքը, որի հիմքում, ըստ ի.գ.դ. պրոֆեսոր Աիդա Իսկոյանի, «օբյեկտիվ իրավական շահ»-ն է, ընդ որում՝ այնպիսի շահը, որն ունի հանրային կարևորություն, ծագում է հանրային բնույթ ու նշանակություն ունեցող հարաբերություններից, և կոնկրետ հասարակական միավորումն ունի տվյալ հարցով «բավարար հետաքրքրվածություն»՝ հիմք ընդունելով վերջինիս կանոնադրական նպատակները¹⁵:

Այսպիսով՝ կարելի է առանձնացնել հասարակական միավորումների կողմից հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու իրավունքի տարրերը: Նախ՝ դատարան դիմելու իրավունքի հիմքում, մեր կարծիքով, պետք է լինի ոչ թե պարզապես հասարակական կազմակերպության անդամների շահի պաշտպանությունը, այլ վարչարարության բողոքարկման համատեքստում իրավաբանորեն արժևորվող հանրության շահի պաշտպանությունը, եթե հասարակական կազմակերպությունը հիմնավորում է, որ.

1) վիճարկվող վարչարարությամբ խախտվել է այդ համատեքստում հանրային շահը, և

2) բացակայում է վարչարարության անհատականացված, կոնկրետ հասցեատերը և/կամ անհատական մակարդակում վարչարարության բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտը, կամ

3) չնայած կոնկրետ հասցեատիրոջ առկայությանը՝ օբյեկտիվորեն անհնարին է վերջինիս կողմից հայց ներկայացնելը, կամ

4) վարչարարության բողոքարկման հիմքում այնպիսի հանրային շահի ենթադրյալ խախտումն է, որ այդպիսի շահը գերակայում է նաև վարչարարության հասցեատիրոջ՝ վարչական ակտին վստահելու և վարչական ակտի բողոքարկման իրավունքներին:

Հատկանշական է, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29.3-րդ գլխում ամրագրված՝ հասարակական կազմակերպությունների կողմից դատարան հայց ներկայացնելու հիմքում, ըստ էության,

¹⁵ Տե՛ս Aida Iskoyan, The Issue of Locus Standi of Non-Governmental Organizations in the Sphere of Environmental Protection (Constitutional-Legal Analysis), էջ 6, հասանելի է՝ https://www.old.yasu.am/files/Aida_Iskoyan-1415703186-.pdf, 08.02.2026թ. դրությամբ:

ոչ թե հանրային շահի պաշտպանության չափանիշների նախատեսումն է, այլ միայն առանձին ոլորտներում անձանց իրավունքների պաշտպանությունը, կարծում ենք, այս համատեքստում հասարակական կազմակերպությունների կողմից դատարան դիմելու կոնցեպտուալ հիմքը վերանայման ենթակա է, և օրենսդրական հետագա կարգավորումներն ու իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանան հասարակական կազմակերպություններին միայն վերոնշյալ դեպքերում վարչական դատարան դիմելու իրավունք վերապահելու ճանապարհով: Մեր մոտեցումն այն է, որ հասարակական կազմակերպությունների կողմից հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելը պետք է հնարավոր լինի միայն խիստ բացառիկ դեպքերում, և յուրաքանչյուր դեպքում հայցը վարույթ ընդունելու հարցը լուծելիս դատարանը պարտավոր է մանրամասն գնահատականի արժանացնել հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու՝ վերոգրյալ հիմքերի առկայությունը:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 29.3-րդ հոդվածով ներկայումս նախատեսված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով ներկայացվող հայցերին, ապա դրանք, կարծում ենք, իրենց էությանմբ ոչ թե հանրային շահի, այլ առանձին՝ խոցելի կարգավիճակում գտնվող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով ներկայացվող հայցեր են, ուստի խմբային հայցի ներդրման դեպքում այդ շահերի պաշտպանության առավել արդյունավետ գործիքակազմ կարող է լինել խմբային հայցի ինստիտուտը:

Ընդ որում՝ ինչպես խմբային հայցի դեպքում, այնպես էլ հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելու դեպքում այդպիսի իրավունքը չի կարող վերապահվել ցանկացած հասարակական կազմակերպության. հասարակական կազմակերպությունը դատարան դիմելու իրավունք պետք է ունենա միայն այն դեպքում, երբ իր կանոնադրական նպատակներից է տվյալ ոլորտում հանրային շահի և անձանց իրավունքների պաշտպանությունը, և առկա են բավարար ապացույցներն առ այն, որ տվյալ կազմակերպությունը փաստացի գործունեություն է ծավալել վարչարարության համապատասխան ոլորտում անձանց իրավունքների պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ: Այդպիսի չափանիշների սահմանման հիմքում կարող են դրվել Օրենսգրքում ներկայումս շրջակա միջավայրի պաշտպանության և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով հասարակական

կազմակերպություններին դատարան դիմելու իրավունք վերապահելու հիմքում դրված չափանիշները, որոնք, ըստ էության, հանգում են հետևյալին.

1) հայցադիմումը պետք է բխի կազմակերպության կանոնադրական նպատակներից ու խնդիրներից և ուղղված լինի կազմակերպության շահառուների՝ կազմակերպության կանոնադրային նպատակների առումով կոլեկտիվ շահերի կամ համապատասխան ոլորտում հանրային շահի պաշտպանությանը.

2) կազմակերպությունը հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում պետք է գործունեություն ծավալած լինի այն ոլորտում, որին առնչվող վարչարարությունը վիճարկվում է:

Իրավաչափորեն կարող է ծագել այն հարցը, թե արդյո՞ք հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման մոդելը չի նույնանում անձի կողմից ողջ հասարակության շահի պաշտպանության նպատակով ներկայացվող հայցի (*action popularis*) հետ, և եթե՝ ոչ, ապա ի՞նչ սկզբունքային տարբերություններ ունեն այս երկու ինստիտուտները, և նպատակահարմա՞ր է արդյոք նաև այդ ինստիտուտի ներդրումը վարչական դատավարությունում: Ինչպես վերն արդեն նշվել է, միջազգային պրակտիկայում վարչարարության բողոքարկման համատեքստում այս հայցատեսակի կիրառելիության մոտեցումները խիստ տարբերվում են՝ դրա կիրառման հնարավորությունն սկզբունքորեն ժխտելուց մինչև դրա լայն կիրառելիություն՝ հատկապես սոցիալապես խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության համատեքստում:

Հռոմեական իրավունքից ծագող այս ինստիտուտի նպատակն առանձին անհատի կողմից ողջ հասարակության շահերի պաշտպանության համար հայց ներկայացնելն է: Հատկանշական է, որ ներկայումս այդ ինստիտուտը միայն խիստ բացառիկ դեպքերում է կիրառելի համարվում նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեի կողմից, ըստ որի՝ այն դեպքերում, երբ բողոքարկման առանձին որևէ սուբյեկտ չի կարող անհատականացվել, *action popularis*-ը պետք է անթույլատրելի լինի: Միայն խիստ բացառիկ դեպքերում է, որ այն կարող է համարվել թույլատրելի: Մասնավորապես, երբ տուժող անձն անհետացել է կամ դիտավորյալ թաքցվում է, կամ

անհնար է պարզել վերջինիս գտնվելու վայրը, վերջինս ձերբակալված է կամ հոգեբուժական հաստատությունում է¹⁶:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս *actio popularis* գանգատներն անընդունելի է համարում: Չնայած դրան՝ դատարանն իր որոշ գործերում ընդգծել է տվյալ գործի քննության շրջանակում իր դիրքորոշման կամ ներկայացված գանգատի վերափոխումը *actio popularis* բողոքի կամ իրավունքի պաշտպանության խմբային միջոցի: Մասնավորապես, մի գործով դատարանն ընդգծել է, որ իր կողմից արձանագրված խախտումներն ազդում են ոչ միայն դիմումատուի, այլև ևս 1850 նմանատիպ բողոքների վրա, որոնք ներկայացվել են ավելի քան 8000 հայցվորների և մի քանի հազար պոստենցիալ հայցվորների անունից¹⁷: Այսպիսով՝ ընդհանուր առմամբ ժխտելով անհատականացված շահ չունեցող անձանց կողմից այլ անձանց կամ ընդհանուր հասարակության շահերի պաշտպանությամբ ՄԻԵԴ գանգատ ներկայացնելու իրավունքը, ՄԻԵԴ-ն, այնուամենայնիվ, արձանագրել է, որ կոնկրետ գործով ներկայացված գանգատը կարող է բացի դիմումատուից, ուղղակիորեն վերաբերել նաև անձանց լայն շրջանակի իրավունքներին:

Վենետիկի հանձնաժողովը, մյուս կողմից, բացասական դիրքորոշում ունի *actio popularis*-ի նկատմամբ, և նշել է, որ բողոքարկման իրավունք պետք է ունենան միայն այն անձինք, ում իրավունքների վրա ազդում է բողոքարկվող ակտը. հակառակ դեպքում՝ բողոքը քննող մարմինը չափազանց կձանրաբեռնվի այնպիսի անձանց իրավունքներով, որոնք բողոքարկում են ցանկացած ակտ, որի մասին լսել են¹⁸:

Մեր մոտեցմամբ՝ *action popularis*-ն իր դասական՝ ցանկացած անձի կողմից հանրային շահի պաշտպանության վարչարարության բողոքարկման իմաստով ընդունելի չի կարող լինել, քանի որ այն կհանգեցնի ոչ միայն իրավունքի գերակայության, իրավական որոշակիության, վարչական ակտի հասցեատերերի իրավաչափ ակնկալիքների, իրավունքների և օրինական շահերի խախտման, այլև իրավական անվտանգության սպառնալիք դառնա և հանգեցնի դատարանների էական

¹⁶ Տե՛ս Panayote Celal v. Greece (communication no. 1235/2003); Juliya Vasilyevna Telitsina v. Russian Federation (communication no. 888/1999)

¹⁷ Տե՛ս D.H. and Others v. the Czech Republic գործով ՄԻԵԴ-ի վճիռը

¹⁸ Տե՛ս European Commission for Democracy Through Law (Venice Commission) Opinion on the Draft Constitutional Law on Introducing Amendments and Additions to the Constitutional Law on the Constitutional Chamber of the Supreme Court of the Kyrgyz Republic, Strasbourg, June 16, 2014, Opinion No. 771 / 2014, հասանելի է՝ <https://u.to/9qF0lg>, 08.02.2026թ. Դրությամբ:

ծանրաբեռնմանն այնպիսի հայցերով, որոնք ներկայացնող սուբյեկտները չունեն իրավական որևէ շահագրգռվածություն: Ավելին, հասարակական կազմակերպությունների՝ դատարան դիմելու՝ մեր կողմից առաջարկվող մոդելը պետք է ձևավորվի որպես ոչ թե *actio popularis*-ի դրսևորում, այլ հանրային շահի պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունքի իրացման այնպիսի դրսևորում, որի հիմքում ևս հասարակական համապատասխան կազմակերպության որոշակի, ակնհայտորեն հիմնավորված շահագրգռվածությունն է՝ վերջինիս կողմից դատարան դիմելու՝ մեր առանձնացրած չափանիշների առկայությամբ:

Հատկանշական է, որ առանձին դեպքում «ցանկացած անձի» վերապահված դատարան դիմելու իրավունքը նման մեկնաբանություն է ստացել Իտալիայի դատարանների կողմից, որոնք ևս «յուրաքանչյուր անձ կարող է բողոքարկել» արտահայտությունը մեկնաբանել են որպես «լեգիտիմ շահագրգռվածություն ունեցող յուրաքանչյուր անձ կարող է բողոքարկել»¹⁹:

Այսպիսով.

1. Վարչարարության բողոքարկման համատեքստում խմբային հայցի ինստիտուտը պետք է ունենա իր իրավական ամրագրումն ու ճանաչումը՝ որպես վարչարարության իրավաչափության համակարգային վերանայման, վարչարարության արդյունքում անձանց իրավունքների համակարգային խախտումների հակակշռմանն ուղղված գործիքակազմ, որի նպատակը վարչարարության ոչ իրավաչափության այնպիսի դրսևորումների շտկումն է, որոնք համակարգային, կրկնվող բնույթ ունեն կամ խոսում են ոչ թե առանձին դեպքում վարչարարության ոչ իրավաչափ դրսևորման, այլ տվյալ ոլորտում իրականացվող մեծածավալ ոչ իրաչափ քաղաքականության մասին:

2. Խմբային հայցի ինստիտուտի ներդրումը չի կարող մեկնաբանվել որպես վարչարարության բողոքարկման սուբյեկտներին առաջադրվող պահանջների թուլացում, վարչարարության բողոքարկման սահմանների լայնացում կամ գործադիր իշխանության գործառույթային ինքնուրույնությունը պահանջող ոլորտներում դատական միջամտության թույլատրելիություն. խմբային հայցով յուրաքանչյուր հայցվոր պետք է

¹⁹ St'u Eliantonio M, Backes CW, van Rhee CH, Spronken TNBM and Berlee A, Standing up for your Right(s) in Europe. A Comparative Study on Legal Standing (Locus Standi) before the EU and Member States' Courts, Intersentia, 2013, էջ 72

բավարարի վարչարարության բողոքարկման իրավունք ունենալու համար անհրաժեշտ՝ իրական շահագրգռվածության չափանիշին, և խմբային հայցի ինստիտուտն այս համատեքստում չի կարող մեկնաբանվել որպես նշված չափանիշներից ավելի ցածր աստիճանի շահագրգռվածություն ունեցող անձանց կողմից վարչարարության խմբային վիճարկման, վարչարարության նպատակահարմարության, վարչական մարմինների քաղաքական որոշումների տիրույթում գտնվող հարցերի վերանայման կամ գործադիր իշխանության իրացմանը դատարանի՝ այլ անթույլատրելի միջամտության հնարավորություն:

3. Առաջարկում ենք սահմանել հասարակական միավորումների կողմից հանրային շահի պաշտպանության համատեքստում վարչարարության բողոքարկման նոր՝ վարչարարության բնույթին և բողոքարկող սուբյեկտին առաջադրվող չափանիշներ: Որպես առաջին խումբ չափանիշներ՝ առաջարկվում է վարչարարության բողոքարկման հիմք դիտարկել ոչ թե պարզապես հասարակական կազմակերպության անդամների շահի պաշտպանությունը, այլ վիճարկվող վարչարարության ոլորտում իրավաբանորեն արժևորվող այնպիսի հանրային շահը, որի պաշտպանությամբ արդարացիորեն շահագրգռված է տվյալ հասարակական կազմակերպությունը: Մյուս կողմից՝ այդպիսի չափանիշ է առանձնացվում վարչարարության անհատականացված, կոնկրետ հասցեատիրոջ և/կամ անհատական մակարդակում վարչարարության բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտի բացակայությունը, չնայած կոնկրետ հասցեատիրոջ առկայությանը, վերջինիս կողմից հայց ներկայացնելն օբյեկտիվորեն անհնարին լինելը կամ վարչարարության բողոքարկման հիմքում այնպիսի հանրային շահի ենթադրյալ խախտումն է, որ այդպիսի շահը գերակայում է նաև վարչարարության հասցեատիրոջ՝ վարչական ակտին վստահելու և վարչական ակտի բողոքարկման իրավունքներին:

3. Հասարակական կազմակերպությունը հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման իրավունք պետք է ունենա միայն այն դեպքում, երբ հիմնավորում է «հանրային շահի պաշտպանությամբ վարչարարության բողոքարկման իրական շահագրգռվածությունը», որը, ի տարբերություն մասնավոր շահի պաշտպանությամբ բողոքարկման շահագրգռվածության թեստի, որոշվում է ոչ թե վարչարարության և այն բողոքարկող սուբյեկտի միջև կապից, այլ բողոքարկվող սուբյեկտի հատկանիշներից ելնելով:

KEY ISSUES OF CLASS ACTION AND ADMINISTRATIVE REVIEW FOR THE PROTECTION OF PUBLIC INTEREST IN ADMINISTRATIVE PROCEEDINGS

GEGHAMYAN ELINA

Lecturer at the Chair of Constitutional Law,

Faculty of Law, Yerevan State University,

Head of the Legal Department, “TOWER INTERNATIONAL CONSULTANTS” CJSC

Abstract. This article examines the protection of public interest within administrative review, emphasizing mechanisms that allow both the effective control of systemic and repeated administrative irregularities and the protection of legally recognized public interests, even where no parties with individual locus standi exist. Central to the analysis is the institution of the collective action (class action), explored through European, North American, and Russian doctrinal sources and comparative judicial practice. The author demonstrates that collective actions not only conserve judicial resources but also provide a robust tool against widespread administrative misconduct, without diluting the requirements for standing or expanding the limits of judicial intervention into executive discretion.

Additionally, the article investigates the role and the essence of the institute of challenging administrative actions (by civil society organizations) for the protection of public interest, distinguishing it from protection of vulnerable groups and the traditional *actio popularis*. By analyzing these mechanisms comparatively, the author identifies their conceptual differences and proposes a set of criteria for permitting civil society litigation.

Keywords: class action; public interest; administrative action; judicial review; civil society organizations; *actio popularis*.

КЛЮЧЕВЫЕ ВОПРОСЫ КОЛЛЕКТИВНОГО ИСКА И ОБЖАЛОВАНИЯ АДМИНИСТРАТИВНЫХ ДЕЙСТВИЙ ДЛЯ ЗАЩИТЫ ПУБЛИЧНОГО ИНТЕРЕСА В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

ГЕГАМЯН ЭЛИНА

Преподаватель кафедры конституционного права
юридического факультета

Ереванского государственного университета,
начальник юридического отдела ЗАО «TOWER INTERNATIONAL CONSULTANTS»

Аннотация. В данной статье рассматривается защита общественных интересов в контексте обжалования административных действий, с акцентом на механизмы, позволяющие как эффективно контролировать системные и повторяющиеся административные нарушения, так и обеспечивать защиту юридически признанных общественных интересов, даже при отсутствии лиц с индивидуальным правом на обжалование. Центральное место в анализе занимает институт коллективного иска, изучаемый на основе европейских, североамериканских и российских доктринальных источников, сравнительной судебной практики. Автор показывает, что коллективные иски не только экономят судебные ресурсы, но и служат эффективным инструментом против широкомасштабных административных злоупотреблений, не ослабляя требования к праву на обращение и не расширяя пределы судебного вмешательства в компетенцию исполнительной власти. Кроме того, в статье исследуется роль и сущность института оспаривания (организациями гражданского общества) административных действий в целях защиты общественных интересов, в отличие от мер защиты, предоставляемых уязвимым группам, и традиционного *actio popularis*. Проводя сравнительный анализ этих механизмов, автор выявляет их концептуальные различия и предлагает набор критериев для разрешения судебных разбирательств в гражданском обществе.

Ключевые слова: коллективный иск; общественный интерес; административная деятельность; судебное обжалование; общественные объединения; *actio popularis*.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Cassese S, European Administrative Law (transl of Il diritto amministrativo europeo, Milan Giuffrè 2014)
2. Commission Recommendation of June 11, 2013, on common principles for injunctive and compensatory collective redress mechanisms in the member states concerning violations of rights granted under Union Law (2013/396/EU), հասանելի է՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32013H0396>, 08.02.2026թ. դրությամբ:
3. D.H. and Others v Czech Republic (Application no. 57325/00) (ECtHR, 13 November 2007)
4. Eliantonio M, Backes C, Rhee CH, Spronken TNBM and Berlee A, Eliantonio M, Backes CW, van Rhee CH, Spronken TNBM and Berlee A, Standing up for your Right(s) in Europe. A Comparative Study on Legal Standing (Locus Standi) before the EU and Member States' Courts, Intersentia, 2013, 72.
5. European Commission, Collective Redress in the EU COM (2013) 401
6. European Commission for Democracy Through Law (Venice Commission), Opinion on the Draft Constitutional Law on Introducing Amendments and Additions to the Constitutional Law on the Constitutional Chamber of the Supreme Court of the Kyrgyz Republic (Opinion No 771/2014, June 16, 2014)
7. Graziadei M, Comparative Law as the Study of Legal Transplants in Mathias Reimann and Reinhard Zimmermann (eds), The Oxford Handbook of Comparative Law (OUP 2006).
8. Hensler DR, The Global Landscape of Collective Litigation in Class Actions in Context (Edward Elgar Publishing) 3–20 <https://doi.org/10.4337/9781783470440.00008>, հասանելի է 08.02.2026թ. դրությամբ:
9. Inuit Tapiriit Kanatami v Parliament and Council Case C-583/11 P EU:C:2013:625 <https://curia.europa.eu/juris/liste.jsf?num=C-583/11>
10. Iskoyan A, The Issue of Locus Standi of Non-Governmental Organizations in the Sphere of Environmental Protection, Constitutional-Legal Analysis, Yerevan State University, 2014 https://www.old.y-su.am/files/Aida_Iskoyan-1415703186-.pdf, հասանելի է 08.02.2026թ. դրությամբ:
11. Mangold A.K. and Wahl R., Das europäisierte deutsche Rechtsschutzkonzept' 48 Die Verwaltung 1, 2015
12. Panayote Celal v Greece Communication No 1235/2003 (UN Human Rights Committee)
13. Scott C., Macklem P., Constitutional Ropes of Sand or Justiciable Guarantees – Social Rights in a New South African Constitution // University of Pennsylvania Law Review, Vol.141(1), 1992
14. Sunstein C., Why Groups Matter in Administrative Law // Journal of Legal Studies, Vol.39, p. 431.
15. Telitsina v Russian Federation Communication No 888/1999 (UN Human Rights Committee)
16. Watson A., Legal Transplants: An Approach to Comparative Law, University Press of Virginia, 1974
17. Е А Ковалёва. Публичные иски в административном судопроизводстве. (2020) 3 Вопросы правосудия.
18. Ю Н Стариков. Административная юстиция (Воронежский гос. университет 1999) 245–260.

Հոդվածը գրախոսվել է 26.01.2026
Ներկայացվել է տպագրության 30.01.2026

